

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԱԼԲԵՐՏ ՍՈՒՇԵՂՅԱՆ

Վ ԴԱՐԻ ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՆՈՐ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

1944 թ. ապրիլի 10-ին, հանդես գալով ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի նիստում «Ժամանակագրական խնդիրներ հայոց հին մատենագրության մեջ» թեմայով՝ ակադեմիկոս Ստ.Մալխասյանցը Վ դ. նշանավոր հեղինակների երկերի գրության ժամանակը որոշելու համար առաջ քաշեց մի բոլորովին նոր և բավական լուրջ փաստարկ. «Աչքի ընկնող երևույթ է, որ մինչև Վ դարի վերջերը գրող հեղինակներից Փափստոսը, Խորենացին, Փարպեցին շատ լավ գիտեն Ագաթանգեղոսին, հաճախակի հիշում են Գրիգոր Լուսավորչին, - մատնանշում է անվանի հայագետը, - այնինչ նույն դարի առաջին կիսում գրող հեղինակները, մինչև Եղիշե ներառյալ, ոչ Ագաթանգեղոսին գիտեն, և ոչ Գրիգորի անունն են տալիս: Կորյունը, որ գրել է «Վարք սրբոյն Մեսրոպայ», որի մեջ հաճախ հիշում է Սահակ կաթողիկոսին՝ ոչ մի անգամ չի հիշատակում, թե նա Գրիգոր Լուսավորչի զարմից է... Նա Գրիգորին չգիտե»²:

Ըստ Մալխասյանցի, Ագաթանգեղոսին չգիտե նաև Եղիշե պատմիչը, և այս ցույց տալու համար նա Եղիշեի Վարդանանց պատմությունից բերում է մի շատ ուշագրավ դրվագ: 451թ. Ավարայրի ծակատամարտից առաջ «հայոց եկեղեցական-քաղաքական ժողովը, Հովսեփ եպիսկոպոսի գլխավորությամբ, Վասակ մարզպանի, Ներշապուհ Ռմբոսյանի, Վարդան սպարապետի մասնակցությամբ, պաղատանքի թուղթ են գրում Թեոդոս (Փոքր) կայսրին, օգնություն խնդրելով պարսիկների դեմ: Թղթի մեջ հիշում են, թե մեր նախնին՝Տրդատը, մանկության հասակում իր հայրասպան հորեղբայրներից փախչելով ապավինեց Հռոմ և Հռոմի ս. եպիսկոպոսից ընդունեց հավատն ի Քրիստոս և լուսավորեց հյուսիսային երկրները³: Եղիշեի հաղորդած այս տեղեկությունը, - եզրակացնում է Մալխասյանցը, - ամբողջապես խորտա-

1 ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», 1944, № 6-7, էջ 7-24. - Ստ.Մալխասյանց, Բանասիրական հետազոտություններ, Երևան, 1982, էջ 9-32:

2 Ստ.Մալխասյանց, էջ 12-13:

3 Հմմտ. Եղիշեի Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին, ի լոյս ածեալ բաղդատութեամբ ձեռագրաց աշխատութեամբ Ե.Տէր-Մինասեան, Երևան, 1957, էջ 72:

կում է Ազաթանգեղոսի Պատմության հիմքը: Այստեղ ոչ Անակ կա, Գրիգորի հայրը, Խոսրով թագավորին սպանող, այլ Խոսրովի եղբայրներն են նրան սպանել, ոչ Գրիգոր կա, Տրդատին մկրտող և Հայաստանը քրիստոնեության դարձնող, այլ Հռոմի եպիսկոպոսն է նրան քրիստոնյա դարձրել»¹: Եվ Մալխասյանցը կտրուկ եզրափակում է. «Եղիշեի Պատմությունը գրված ժամանակ Գրիգորը անհայտ էր հայ ժողովրդին, ուրեմն դեռ չկար Ազաթանգեղոսի պատմությունը, որն առաջինն ստեղծեց Գրիգորին իբրև Հայաստանի լուսավորիչ»²:

Այս հարցին անդրադարձել է Մալխասյանցը նաև Փավստոս Բուզանդի Հայոց պատմության աշխարհաբար թարգմանության ներածության մեջ: «Աչքի ընկնող երևույթ է, - մատնանշում է նա, - որ Կորյունը, որն այնքան հաճախ ու մեծ պատկառմանքով հիշում է ս.Սահակ կաթողիկոսին, ոչ մի անգամ Գրիգոր Լուսավորչի անունը չի տալիս, ոչ մի անգամ չի հիշատակում, որ իր սիրած ուսուցիչը՝ Հայաստանի լուսավորիչը, պանծալի ծագում ունի, Գրիգոր Լուսավորչի զավակն է, նրա թոռան թոռնորդին, ինչպես գիտեն և կրկնում են Խորենացին ու Ղ.Փարպեցին: Սա նշանակում է, որ Կորյունը դեռ Գրիգոր Լուսավորչին չի ճանաչում»:

Բայց Ստ. Մալխասյանցի այս փաստարկը XX դ. բարոյախոսականից է, երբ օրինաչափ է համարվում նախնիներով պարծենալը և նրանց արժանիքների շուքի տակ ապրելը: IV դ. քրիստոնեության նշանավոր վարդապետներից Բարսեղ Կեսարացին իր մի ծառում խրատում է. «Նայիր քեզ... որպէսզի մոլորութեամբ առաւել հպարտանալով չհասնես ամբարտաւանութեան եւ անգիտութեամբ չընկնես յետին տրտմութեան մէջ: Փշու՜մ ես հարստութեամբ եւ մեծամտանում նախնիներով... Նայիր քեզ...»³: Այս է պատճառը, որ Կորյունը Մաշտոցի Վարքում հիշատակում է Մեսրոպ Մաշտոցի աննշան հորը՝ Վարդանին, որին Փավստոսը Վրիկ է անվանում, բայց չի հիշատակում Սահակ Պարթևի նշանավոր հորը՝ Ներսես Մեծ կաթողիկոսին:

Շարունակելով իր սևեռում գաղափարը, Մալխասյանցը նույն կերպ է բացատրում նաև Գրիգոր Լուսավորչի անվան բացակայությունը Եղիշեի Վարդանանց պատմության մեջ. «Նույն երևույթը տեսնում ենք և Եղիշեի մոտ: Մինչ Ղ. Փարպեցին առաջին կրոնական պատերազմի պատմության մեջ քանիցս հիշում է Գր. Լուսավորչին, Եղիշեն ոչ մի անգամ նույն անցքի պատմության մեջ չի հիշում: Նույնիսկ Ղևոնդ Երեցի ընդարձակ քարոզի մեջ, պատերազմի նախօրյակին, երբ սա հիշեցնում է բարեպաշտ մարդկանց օրինակներ Հին կտակարանից, և երբ անշուշտ պահանջվում էին հիշյալ Գրիգորի կրած չար-

1 Ստ.Մալխասյանց, էջ 13:

2 Նույն տեղում, էջ 14:

3 «Գանձասար» աստուածաբանական հանդես, հ. է, Երեւան, 2002, էջ 224:

չարանքները, Հայաստանի՝ քրիստոնեական լույսով լուսավորելը, Ղևոնդն էլ գանց է անում այս անունը»¹:

Եվ այստեղ Մալխասյանցը կրկին հիշում է Եղիշեից Հայոց ժողովի թուղթը Թեոդոս Փոքր կայսրին, ըստ որի Հայոց Տրդատ թագավորը՝ Հռոմի եպիսկոպոսից (և ոչ թե Գրիգոր Լուսավորչից) է ընդունել քրիստոնեություն: Ուրեմն Եղիշեն ևս, որ Վարդանանց պատմությունը գրել է 461թվին՝ պարսից Պեռոզ թագավորի գահակալության 5-րդ տարում, Գրիգոր Լուսավորչին դեռ չգիտե: «Սրա պատճառն այն է, - եզրակացնում է անվանի հայագետը,- որ Գրիգոր Լուսավորչին իր վսեմ կերպարանքով, իբրև խոստովանող, իբրև Հայաստանի լուսավորիչ և առաջին կաթողիկոս, առաջին անգամ ստեղծվել է Ագաթանգեղոսի անունը կրող լեգենդար պատմության մեջ, իսկ մինչ այդ, մոտ 180 տարի, նրա անձնավորությունը մնացած է եղել մթության մեջ»²: Եվ քանի որ Ագաթանգեղոսի Պատմությունը 461 թ. դեռ չկար, ապա նրա գրության ժամանակը Մալխասյանցը դնում է 461- 465 թվականներին:

Տրդատ Մեծի հոր՝ Խոսրով Մեծի (կամ Ա - ի) սպանության հարցին անդրադարձել է և նշանավոր պատմաբան Հակոբ Մանանդյանը. «Թե ի՞նչ պարագաներում էր սպանված Խոսրով Բ - ը՞ այդ պարզ չէ, որովհետև այդ մասին մենք ունենք տարբեր ավանդություններ: Ըստ Ագաթանգեղոսի՝ նրան սպանել էր տվել դավով Արտաշիրը Անակ Պարթևի ձեռով, և Խոսրովի որդիներից ազատվել էր միայն մանկիկ Տրդատը, որին դայակները փախցրել էին Հռոմեական երկիրը: Իսկ Եղիշեի վկայությամբ՝ Տրդատին տղայության հասակում տարել էին Հռոմայեցոց երկիրը, ազատելով նրան «ի հայրասպան մարդախոռոխոց հորեղբարցն իրոց»: Եղիշեի այս վկայությունը, որ մեջ է բերված հայերի Թեոդոս կայսրին գրած նամակում, հավանորեն, ավելի մոտ է ճշմարտության, քան Ագաթանգեղոսի վիպական պատմվածքը: Ուստիև կարելի է թերևս ենթադրել, որ մանկիկ Տրդատի փախուստից հետո քաղաքական իշխանությունը Հայաստանում իրենց ձեռքն էին ձգել Խոսրով Բ - ի եղբայրները»³: Այստեղ, Հ. Մանանդյանին ևս թյուրիմացության մեջ է դրել Եղիշեի «հայրասպան հորեղբարցն» արտահայտությունը: Ինչպես ասվեց, Եղիշեն պարզապես վերապատմում է Ագաթանգեղոսի Պատմության առաջին գրքում իր ընթերցածը՝ դավադիր Անակի ձեռքով Խոսրով Մեծի սպանության մասին: Անակը և նրա հարազատ եղբայրը նույնպես սպանվեցին մահամերձ Խոսրով Մեծի հրամանով վրեժխնդիր հայ նախարարների ձեռքով, ուստի անհիմն է

1 Փալստոս Բուզանդ, Պատմություն Հայոց, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները Ստ. Մալխասյանցի, Երևան, 1968, էջ 36 (ներածություն):

2 Նույն տեղում, էջ 36-37:

3 Հ. Մանանդյանը նկատի ունի Տրդատ Մեծի հորը՝ ավանդական Խոսրով Մեծին:

4 Հակոբ Մանանդյան, Զննական տեսություն հայ ժողովրդի պատմության, Կ. Բ, մասն Ա, Երևան, 1957, էջ 104 - 105:

այն հետևությունը, թե մանկիկ Տրդատի փախուստից հետո «քաղաքական իշխանությունը Հայաստանում իրենց ձեռքն էին ձգել Խոսրով Բ - ի եղբայրները»: Պատմաբանն ակներև տարբերություն է դնում Խոսրով Բ - ի եղբայրների և մանկիկ Տրդատի հորը սպանողների, այն է՝ հորեղբայրների միջև:

Գրեթե չորս տասնամյակ անց, նույն փաստարկներով ու եզրակացությամբ է անդրադառնում V դ. այս պատմական ու դավաճաբանական հարցադրումներին նաև պատմագիտության դոկտոր Արտաշես Մարտիրոսյանը իր «Մաշտոց» մենագրության մեջ՝ կրկնելով նախորդի սխալները, բայց և չիիշատակելով նրա անունը. «Լուսավորչի պաշտամունքը հայ Արշակունիների անկումից հետո միանգամից չսկսվեց, այլ միայն V դարի վերջին տասնամյակներին, - իր նախորդ անվանի հետազոտողին հետևելով՝ հայտարարում է վերջինս, - Կորյունը Լուսավորչի մասին ոչինչ չգիտե, կամ ոչինչ չի ասում, բայց նա կարող էր և կային առիթներ, իսկ Սահակի դերը նրա մոտ համեստ է ու անբռնաձիգ»: Եվ անմիջապես էլ քննադատը նույն ոգով, բայց և իր ուրույն, ինքնատիպ ոճով շարունակում է. «Լուսավորչի մասին լռում է և Եղիշեն, որի պատմությունը գրված է շուրջ 458-60 թվականներին: Եղիշեն նույնպես կարող էր առիթ գտնել նրա անունը տալու, ասենք Սիիրներսեհին հղած պատասխանի մեջ, որտեղ ասված է, որ անդավաճան են Քրիստոսի հավատին: Պետք է լիներ՝ և Լուսավորչի»¹: Եվ այստեղ Ա.Մարտիրոսյանը կրկին վկայակոչում է Հռոմի սուրբ եպիսկոպոսապետից հավատն ընդունած Տրդատիոս թագավորի դրվագը Թեոդոս կայսրին հղած Թղթից, որ բերում է Եղիշեն Վարդանանց պատմության մեջ. «Նախնին մեր Տրդատիոս, յիշելով զառաջին սերն ձեր, - գրում են Թեոդոս կայսեր ապստամբ եպիսկոպոսներն ու նախարարները, - որ ի տղայութեան փախուցեալ ի հայրասպան մարդախոռոխող հորեղբարցն իւրոց՝ ապրեալ սնաւ յերկրիդ Յունաց, և ի ձէնց թագաւորեալ տիրէր հայրենի աշխարհիս, սոյնպէս և զհաւատսն որ ի Քրիստոս՝ ընկալեալ ի սուրբ եպիսկոպոսապետէն Հռովմայ, լուսաւորեաց զխաւարային կողմանս հիւսիսոյ. զոր և այժմ կամին ի մէջ կորզել հանել խաւարասէր որդիքն Արևելից»²:

ԳՐԻԳՈՐ ԼՈՒՄԱՎՈՐՉԻ ԱՆՎԱՆ ՇՈՒՋ ԵՂԱԾ ԼՈՒԹՅՈՒՆԸ V ԴԱՐԻ ԿԵՍԵՐԻ ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳԻՐՆԵՐԻ ԵՐԿԵՐՈՒՄ

Չափազանց մեծ միամտություն կլիներ կարծել, թե Կորյունը 440-ական թթ. Մաշտոցի Վարքում չի հիշատակել Գրիգոր Լուսավորչի անունը, իբր այն պատճառով, որ տեղյակ չի եղել ոչ միայն նրա գործերին, այլև նույնիսկ անվա-

1 Ա.Մարտիրոսյան, Մաշտոց, Երևան, 1982, էջ 227-228:

2 Նույն տեղում, էջ 228:

նը: Կորյուների գրած Մաշտոցի Վարքում և Ագաթանգեղոսի Պատմության մեջ առկա է «Հաճախագույն ծառեր»-ի և բարձր Վարդապետության մասին մի ամբողջ պարբերություն (Կոր., Ի, Ագաթ., «886»), որոնց հեղինակն է ըստ Կորյունի՝ Մաշտոցը, իսկ ըստ Ագաթանգեղոսի՝ Գրիգոր Լուսավորիչը: Հաճախապատում ծառերի բոլոր ձեռագրերում դրանք նույնպես վերագրվում են Գրիգոր Լուսավորիչին: Ավելին՝ այդ յուրօրինակ «ճառընտիրի» քսաներեք ծառերից յուրաքանչյուրն ունի վերնագիր՝ «հորն մերոյ Գրիգորի Լուսաւորչի ծառ Ա», «հորն մերոյ Գրիգորի Լուսաւորչի ծառ Բ», մինչև ԻԳ-րդ ծառը: Այդպես եղել է, անկասկած, նաև Կորյունի ժամանակ: Սկսած գերմանացի հայագետ, ազգագրագետ Պաուլ Ֆետերից՝ XIX դ. վերջից, որոշ բանասերներ այն կարծիքն են ապացուցում, թե այդ ծառերը գրել է Մաշտոցը 430-ական թթ. և տարածել Մեծ Հայքի բոլոր գավառներում՝ իրավունքի, բարոյականության, կենցաղավարության, մարդկային արատների մասին և դրանք վերագրել Գրիգոր Լուսավորիչին: Եթե հավատանք այս վարկածին, ապա կնշանակի, որ այդ ժամանակ Գրիգոր Լուսավորիչն այնպիսի մեծ պաշտամունք ուներ գոնե Հայ եկեղեցու համար, որ Մաշտոցը ցանկացել է իր գրած ծառերը նրան վերագրելով՝ դրանց ավելի մեծ արժեք տալ և դրանց միջոցով ավելի տարածել Լուսավորչի պաշտամունքը ամբողջ Մեծ Հայքում: Հետևաբար, թե՛ առաջին դեպքում, երբ ընդունում ենք, որ Գրիգոր Լուսավորիչն է Հաճախապատում ծառերի հեղինակը և թե՛ երկրորդ դեպքում, երբ ընդունում ենք, որ դրանք Մաշտոցն է գրել և վերագրել Գրիգոր Լուսավորիչին, – մեր խնդրի համար միևնույնն է՝ երկու դեպքում էլ 440-ական թթ. Կորյունը, Եզնիկը, Եղիշեն և Մաշտոցի բոլոր աշակերտները պետք է տեղյակ լինեին ոչ միայն Գրիգոր Լուսավորչի անվանը, այլև նրա անունով տարածված ծառերին և, առհասարակ, ազգային սրբի նրա հռչակին: Էլ ինչպե՞ս կարելի է պնդել, թեկուզ այս մի հատիկ փաստից հետո, թե Եզնիկը, Եղիշեն և հատկապես Կորյունը չգիտեն նույնիսկ Լուսավորչի անունը:

Նման ենթադրությունը ժխտվում է նաև Եզնիկ Կողբացու օրինակով, որը նույնպես «Եղծ աղանդոց» – ում չի հիշատակում Գրիգոր Լուսավորչին: Թեև դա այդպես է, սակայն պարզվում է, որ Եզնիկը ոչ միայն լավ գիտե Գրիգորին, այլև դեռ երիտասարդ հասակում, Հայոց եպիսկոպոսապետ Սահակի և նրա գործակիցների պատվերով հայերեն է թարգմանել հունարենից *Նահատակ տեր Գրիգորի Սահմանադրությունը*.

հոդված Լ2. «Սահմանադրութիւն կարգաց ընկալեալ ի Նահատակէն տեառնէ Գրիգորէ թարգմանեցաւ ի ձեռն Եզնակայ, հրամանաւ երանելոյն Սահակայ եպիսկոպոսապետին Հայոց եւ նորին աթոռակցաց, թէ որպէս սահմանեցաւ կարգ ուխտի եւ որոշումն վանաց»¹:

1 Մաշտոցի Մատենադարան, ձեռագիր № 659, էջ 227 Բ. «Կանոնագիրք Հայոց», Խ. Ա, Երևան, 1964, էջ 625: Տե՛ս նաև Աբել Մխիթարյան, «Պատմութիւն ժողովոյն Հայաստանեայց

Մյուս ձեռագրերում ևս առկա է սույն հիշատակարանը՝ թեև առանց եզմակի անվան.

հոդված ԽԴ. «Այս սահմանադրութիւն կարգաց գրեցաւ հրամանաւ երանելոյն Սահակայ մեծ հայրապետի Հայաստան աշխարհի, ընկալեալ ի քաջ նահատակէմ՝ ի տեառնէն Գրիգորէ՝ թարգմանեցաւ միայն յունէ ի հայ»¹: Այստեղ հիշված եզմակը նույն եզմիկ Կողբացին է, որը թեև «Եղծ աղանդոց»-ում չի հիշատակում Գրիգոր Լուսավորչին, բայց ոչ միայն լավ գիտե նրան, այլև հունարենից թարգմանել է նրա «Թէ որպէս սահմանեցաւ կարգ ուստի եւ որոշումն վանաց» սահմանադրութիւնը, որն ավելի ուշ, 426 թ., հաստատվեց Վաղարշապատի Եկեղեցական ժողովում: Վերջինս այլ բան չէ, քան Գրիգոր Լուսավորչի Հաճախապատումի 23 – րդ ծառը Վանական եղբայրության մասին՝ «Երանելոյն սրբոյն Գրիգորի Հայոց լուսաւորչի Խրատը ձգնութեան եւ ցոյցը հանդիսից որ յառաքինութեան յորդորմունս»², որով սահմանվում էր, իմիջիպալոց, նաև վանքից հեռանալու կարգը, այսինքն՝ «որոշումն ի վանաց»:

Եվ վերջապես, մինչև այժմ հայ բանասիրության և, առհասարակ, հայագիտության մեջ իշխող այն թյուր ենթադրությունը, որ Ազաթանգեղոսի Պատմութիւնը գրվել է 461 – 465 թթ. (Ստ. Մալխասյանց և այլք) կամ մինչև 475 թ. (Ն. Աղոնց), և որի դեմ ես պայքար եմ մղում ուղիղ երեսուն տարի, իր լիակատար հերքումն է գտնում պատանի Մովսես Խորենացու առաջին բանաստեղծական քերթվածում՝ «Ի յիշատակի սրբոյն Հռիփսիմեայ և նորուն վկայակցացն. Ներբողեան ի հանդէս նոցա հրաշազարդ յօրինուածովք»³: Երկու տեղ Ներբողյանում պատանի Մովսեսն ընդգծում է իր «դեռարոյս անձը» և «նորարոյս հոգին», որպեսզի ընթերցողին հասկանալի լինի, թե ինչու է ինքը դեռատի կույս Հռիփսիմեին ներբողում որպես իր մայր, և այս թանկագին վկայությունները թույլ են տալիս որոշել հեղինակի տարիքը և, ուրեմն, նաև Ներբողյանի գրության ժամանակը. «Բայց վասն զի պսակեալս այս ի Հոգւոյն սրբոյ հարսն՝ մայր իմոյ հոգւոյս կուսութեամբ անապական զիս ծնեալ, և ի գիրկս սրբութեան գգուեալ,... զիմս ստիպէ *դեռարոյս անձն* զսրբոյ մօրս և զկուսի աստուածավայելուչ փառաց ներբողել ի յարախմբմունս հոգևոր սորա ծննդոց...»⁴: Ներբողյանի ավարտին պատանի Մովսեսը մի անգամ ևս ակնար-

եկեղեցւոյ», էջ 25 – 31:

1 Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 402:

2 Սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչի Յաճախապատում ծառք եւ աղօթք, Վեներտիկ, 1838. ճառ ԻԳ՝ «Երանելոյն սրբոյն Գրիգորի Խրատը ձգնաւորաց եւ ցոյցը հանդիսից որ յառաքինութիւն յորդորեն», էջ 206 – 219: Սրբոյ Հօրն մերոյ երանելոյն Գրիգորի Լուսաւորչի Յաճախապատում ծառք լուսաւորք, յառաջաբանով, համեմատութեամբ եւ ծանօթութիւններով Արշակ Տէր – Միքելեանի, Էջմիածին, 1894, ճառ ԻԳ, էջ 248 – 265:

3 Ի յիշատակի սրբոյն Հռիփսիմեայ և նորուն վկայակցացն, Ներբողեան ի հանդէս նոցա հրաշազարդ յօրինուածովք (այսուհետ՝ Խորենացւոյ Մատենագրութիւնը), էջ 304 – 325:

4 Սույն տեղում, էջ 307:

կում է իր դեռատի հասակը՝ նշելով, թե իր նորաբույս հոգու «առաջին քրտինքի» պտուղը ծնունդ է կույս Հռիփսիմեին՝ իբրև իր գորովագութ մորը. «...առաջին քրտունը իմոյ նորաբույս հոգույս, որ զքեզ սիրէ սիրեցեալդ իսկապէս բարւոյն. որ և ընկալցիս գթութեամբ, որպէս արդարեւ մայր գորովագութ»¹: Ըստ այսմ, Մովսեսը Ներբողյանը գրած պետք է լինի Հռիփսիմյանց կույսերի «նորահրաշ և գերապայծառ տոնի» առթիվ՝ 435-437 թվերին, 15 - 17 տարեկան հասակում, ծնունդը հաշվելով մոտ 420 թվականից², երբ իր ուսուցիչ Սահակ Պարթևը՝ հեռացվելով Էջմիածնի կաթողիկոսական գահից, հայրենի Տարոնում՝ Աշտիշատում գբադված էր Կոստանդնուպոլսից բերված Սուրբ գրքի կանոնական քնագրի և հայերեն Աստվածաշնչի համեմատությամբ և թարգմանությամբ³: Այդ ժամանակ Մովսեսը դպիր էր ծառայում Սահակ Պարթևի մոտ և դրա հետ մեկտեղ հունարեն ուսանում նրա ձեռքի տակ Ալեքսանդրիա ուսման ուղարկվելու համար: Գուցե հենց այդ ընթացքում էլ նա *սքանչելի ծերից*⁴ տեղեկացել է, որ Հռիփսիմյանց կույսերը նույնպես Հռոմից փախել էին նախ Եգիպտոս՝ Ալեքսանդրիա և այնտեղից եկել Հայաստան՝ Արարատյան երկիր: Եվ շատ հնարավոր է, որ իր Ալեքսանդրիա մեկնելու այս զուգահիշակությունը ու այնուհետև կույսերի նահատակությունը Հայաստանում խռովահույզ զգացումների առիթ են տվել պատանի բանաստեղծին հյուսելու մի զեղուն քերթված՝ լի արտասովոր փոխաբերություններով, շրջասություններով և ընթերցած գրքերից քաղած սրամիտ զուգահեռներով, որոնք անվերապահ կարող են ընդունվել իբրև քերթողական սրամիտ և ուսանելի հնարանքներ: Լեզվական նորակազմություններում նկատելի է ձգտումը իր խոսքի մեջ գործածելու հունարենի նախածանցներ, բայց *հայերենի միջոցներով*՝ ինչպես «ամծայնել», «շրջափայլեալ», «շրջափակեալ», հունաբանների մոտ՝ «պարածածկեալ»: Ուշագրավ է հունարենի օրինակով մի քանի անգամ գործածված «(զ)ընդերկնաւն» գոյականը՝ «ի ներքոյ երկնից» իմաստով:

Բայց մեր խնդրի համար առավել կարևոր է այն, որ Ներբողյանում առկա են վկայություններ և դրվագներ Ագաթանգեղոսի Պատմության ամբողջ ծավալով, որոնք բանասիրական լուրջ կովան են ծառայում Կորյուն-Ագաթանգեղոս աղերսը մի վերջին անգամ ևս լուծելու հոգուտ Ագաթանգեղոսի, և այս անգամ արդեն պատանի Մովսես Խորենացու օգնությամբ: Քանի որ, ինչպես ասվեց, Ներբողյանը գրվել է մոտ 435-437 թվերին, ապա նրա օգտագործած Ագաթանգեղյան հատվածներից աներկբա հետևում է, որ շուրջ 435 թվին արդեն

1 Նույն տեղում, էջ 324:

2 Տե՛ս Ա. Մուշեղյան, Մովսես Խորենացու դարը, էջ 19:

3 Մովսիսի Խորենացու Պատմութիւն Հայոց, աշխատութեամբ՝ Մ. Արեղեան եւ Ս. Յարութիւնեան, Տիֆլիս, 1913 (այսուհետ՝ Խոր.), 9, 4և, էջ 343:

4 Խոր., Բ, ՀԴ, էջ 212:

գոյություն ունեն մեր այսօրվա Ազաթանգեղոսի Պատմությունը, որ Ն. Մառը և Ն. Աղոնցն անվանում են «Հայ եկեղեցու ազգային կանոնական խմբագրություն» և որի ստեղծումը Աղոնցը վերագրում 475 թվականին: Մովսեսը քաղումներ ունի այդ ազգային կանոնական խմբագրության Առաջաբանից, Ա, Բ և Գ գրքերից, ընդհուպ մինչև վերջին դրվագները (Տրդատի այցը Հռոմ և Կոստանդին կայսեր հետ կնքած դաշինքը): Իսկ դա նշանակում է, որ Ազաթանգեղոսի ազգային կանոնական խմբագրությունը գոյություն ուներ արդեն իսկ Սահակ Պարթևի և Մաշտոցի կենդանության օրոք, այսինքն՝ շատ ավելի վաղ՝ քան Կորյունի «Մաշտոցի Վարք»-ը: Եվ քանի որ պատանի Մովսեսը իր Ներբողյանում օգտագործել է այնպիսի հատվածներ, որ բառացի առկա են նաև «Մաշտոցի Վարք»-ում, ապա դա ևս ո՛րերորդ անգամ ապացուցում է, որ Կորյունի և Ազաթանգեղոսի բնագրերում եղած մույնական հատվածների աղբյուրը հենց Ազաթանգեղոսի մեր ձեռքը հասած «ազգային կանոնական խմբագրություն» է և ոչ թե ինչ-որ նախնական մեր ձեռքը չհասած խմբագրություն, որ սովորաբար վկայակոչում են բանասերները՝ առանց որևէ որոշակի հիմքի:

438/9 թ., երբ արդեն արգելանք էր դրված Գրիգոր Լուսավորչի անվան վրա, հավանորեն հենց այդ պատճառով է, որ Ներբողյանում չի հիշատակվում Գրիգոր Լուսավորչի անունը, բայց դրան հակառակ այն մեծապես շարադրված է Ազաթանգեղոսի Պատմության տարբեր մասերից քաղված բառաբանով.

ա) Թեև Ներբողյանը մույնպես չի հիշատակում Սուրբ Գրիգորի անունը, բայց պարունակում է ուղղակի ակնարկներ Խոր փրապում տասնհինգ տարի տառապող Լուսավորչի մասին: Հսկայազոր թագավորին գետին տապալելուց հետո, մանկամարդ կույսը՝ արքունի սենյակից փայլակի պես դուրս ցուլանալով, ձեռքում է մեղքի ծովը (հեթանոս ամբոխը). «...մաքուր աղանի գտերև ծիթենություն ունելով ի բերան, զհոգւոյն աւետիս տալ այնմ, որ ի խորս էջ անդնդոց որպէս Նոյ ի ծոց տապանին, հնգետասանամեայ տընեալ՝ սպասէր մեծի աւետեացն հայր մերոյ աշխարհիս, հոգևոր լուսոյն ծառագայթ, քարոզ միածնին, լուսատրիչն մեծ»¹: Եվ ապա, քանի որ Հռիփսիմյանց կույսերն իրենց գալստյամբ և նահատակությամբ օգնեցին Սուրբ Գրիգորին դուրս գալ Խոր փրապից, - այս ամենը Խորենացին արտահայտել է բանաստեղծորեն՝ Լուսավորչին օգնության փութացող կույս Հռիփսիմեի ողջույնի և ավետյաց խոսքով. «Եւ քեզ աւետիք, երկնաւոր նահատակ և քարոզ փրկութեան, բազմափայլ ծառագայթ, որ ծածկեալդ ես ի գբի. ահա հասի քեզ ի թիկունս, սլացեալ յարևմտից յարևելս»²:

բ) Զանի որ Ներբողյանը շարադրելու ժամանակ արդեն արգելված էր Գրիգոր Լուսավորչի անունը և պաշտամունքը, ապա ինչպես եղիշեն իր Վարդա-

1 Խորենացու Մատենագրութիւնը, էջ 314:

2 Նույն տեղում, էջ 316:

նանց պատմության մեջ, այստեղ էլ պատանի Մովսեսը, Գրիգոր Լուսավորչի գործը վերագրում է Տրդատ թագավորին:

Ներք., էջ 323. «...այլ և զգանձն աստուածութեանն զծաղիկս կուսական մարմնոյն՝ զոր սրբոյն էր արկեալ տապաստ, ժողովեալ ամփոփէր /Տրդատ/ գանձ ինքեան,... և զօրութիւն իւրոյ քաջութեանն քրտունս ի վկայարանս սրբոցն թողու յաւիտենական, և բարեաց օրինակ զինքն յարդարէր ամենեցուն. Առաքելաջան հանդիսիւ լուսաւորեր զարեւելս Երրորդութեանն լուսով: Նա և յարեմուտս մոլորութեանն շիջանէր բոց արեամբ վկայիցն, և աւետարանին ժառագայթ առ լուսով շրջափայլեալ յընդհանուրս»:

Իրականում, ըստ Ագաթանգեղոսի Պատմության, բոլոր ընդգծված հատվածներում՝ նահատակված կույսերի հոշոտված մարմինները հավաքել և զատ-զատ արկղերի մեջ ամփոփել է Սուրբ Գրիգորը իբրև «գանձ աստուածութեան», ինչպես և հենց Գրիգոր Լուսավորիչն է, որ «առաքելաջան հանդիսիւ լուսաւորեր Երրորդութեանն լուսով» Հայաստանի արեւելքն ու արեւմուտքը, և դա բացահատ երևում է Ագաթանգեղոսի հետևյալ վկայություններից:

§ 223՝ «Իսկ նա /սուրբն Գրիգորիոս/ ընթացեալ ժողովել և ամփոփել զմարմինս մոցա ի սպանման տեղեացն, զի կային անդէն». § 224՝ «Եւ ամփոփեաց, առ զնաց ի հնձանն, ուր վանքն իսկ լեալ էին մոցա. և իւր իսկ վանս անդէն կալեալ՝ օթեվանս առնէր /երանելին Գրիգորիոս/». § 717՝ «Արդ՝ եկայք ամփոփեացուք զգանձն Աստուածութեան, զի յայնմանէ պարգևեսցի ձեզ բժշկութիւն ամենեցուն». § 760՝ «Այլ ինքն միայն /սուրբն Գրիգորիոս/ առանձնացեալ, զմի մի իւրաքանչիւր ի սրբոցն առեալ յիւրաքանչիւր արկելոյ դնէր՝ իւրաքանչիւր հանդերձով և իւրեանց կազմութեամբ պնդէր, և կնքէր քրիստոսանշան կնքովն»:

Բայց պատանի Մովսեսն այս բոլոր գործերը Տրդատ թագավորին է վերագրում հենց այն պատճառով, որ 430-ական թվերի երկրորդ կեսին, Ներբողյանը գրելու ժամանակ, արդեն մտցված էր Լուսավորչի պաշտամունքի և անվան արգելքը:

գ) Ագաթանգեղոսի Պատմության Առաջաբանում առկա են մրկածուկի ծովը պատկերող բազմաթիվ արտահայտություններ, ինչպես՝ «բարկացայտ ալիքն լեռնաձև կուտակին» – պատանի Մովսեսը Ներբողյանում շրջասում է այս ծովային պատկերը, տալով նրան փոխաբերական իմաստ՝ «(հողմն հակառակ) հանդարտեցուցանէր զմեղացն փրփրատեսակ ալեացն լեռնացայտ կուտակս »:

դ) Տրդատ թագավորը մեծամեծ նախարարներ և արքունի սպասավորներ է ուղարկում Վաղարշապատի մերձակա հնձանը, որպեսզի չքնադագեղ Հռիփսիմեին ոսկեպատ գահավորակով բերեն ապարանք՝ իրեն կնության և Հայոց տիկնության: Պատանի Մովսեսն էլ արքունի սպասավորների մեջ նրբանկատորեն ավելացնում է թագավորազն օրիորդներին և իր համար նվիրական

հայկազյանց կույսերին, որոնք շքեղ, ոսկեկուռ, գույնզգույն զարդերով պետք է զարդարեին և զգեստավորեին թագավորի կարծեցեալ հարսնացուին:

Ագաթ., § 166. «Եւ անդէն յարքունուստ վաղվաղակի ոսկիապատ գահաւորակս սպասաւորօք հանդերձ հասուցանէին առ դուրս հնձանին, ուր էին վանք մոցա արտաքոյ քաղաքին: Նա և հանդերձս ազնիւս գեղեցիկս փափուկս պայծառս, և զարդարանս երևելիս մատուցանէին մմա յարքունուստ, զի զարդարեսցի...» և § 173. «և մախարարքն և մեծամեծք աւագանւոյն, որ եկեալ էին շքադիրք՝ պատիւ առնել մմա և երթալ ընդ մմա յարքունիս. զի տարցին զնա կնութեան թագաւորին Տրդատայ և Հայոց տիկնութեան»:

Ներք., էջ 311. «Եւ օրիորդք թագաւորազունք և կուսանք հայկազեանցս ոսկիակուռ շքեղաշուք երփն երփն զարդուք, թմբկօք և պարուք գային տանել ի սենեակ արքունի...»:

Ե) Մինչդեռ Գայանեն հորդորում է կույս Հռիփսիմեին, իբրև Քրիստոսի հարսի, փութալ հասնել քրիստոսադիր պսակին, այդ ընթացքում Տրդատ թագավորն իր սենյակում փորձում է աղաչանքով ու պաղատանքով կատարել իր բաղձանքը, – ընդ որում այս հակադիր հորդորները Ներսրոյանի հեղինակն արտահայտել է Ագաթանգեղոսի Պատմության երրորդ գրքի 847-րդ պարբերությունից քաղած դարձվածներով:

Ագաթ., § 847. «Անդ կրթութիւն քաղցրուսոյց ընթերցուածոց հոգեպատում գրոց: Անդ քաջալերութիւն յորդորական լուսաւոր վարդապետութեան, առ ի յառաջադէն ընտրութիւն պսակահամբար քրիստոսադիր կիտին: Անդ եռալ հոգւով աստուածապաշտ ծառայութեամբ: Անդ աղօթք աղերսալիք և պաղատանք փարելիք և խնդրուածք հաշտեցուցիչք»:

Ներք., էջ 322. «ի պաղս հիւսիսոյ... սառուցանողն օդ, որ զեռալն հոգւով արգելոյր... Իսկ զհարաւ քաղցրուսոյց բանին ծաւալեցուցեալ... ծաղկեցուցանէ զՀայաստանս աստուածգիտութեանն բողոքօցիք», էջ 311. «...առաքելոսին Գայիանէ... քաղցրաձայն վարդապետությամբ յորդորէր... փութալ ի մշանակեալ մպատակ պսակահամբար քրիստոսադիր կետին», էջ 312. «...բռնամարտի փակեալ ի սենեակ արքունի... դարձեալ պաղատանք փարելիք, դարձեալ խանդաղատական արտասուք և աղօթք աղերսալիք»:

Նույն հատվածն ունի նաև Կորյունը Մաշտոցի վարքում. «Անդ կրթութիւն քաղցրուսոյց ընթերծուածոց՝ հոգեպատում գրոց: Անդ քաջալերութիւն յորդորական վարդապետութեան, առ ի յառաջադէն ընտրութեանն պսակահաս քրիստոսադիր կիտին: Անդ եռալ հոգւով աստուածապաշտ ծառայութեամբ: Անդ աղօթք աղերսալիք, և խնդրուածք հաշտեցուցիչք վասն ամենեցուն կենաց՝ առ մարդասէրն Աստուած»¹:

1 Կորյուն, Վարք Մաշտոցի, Երևան, 2005, էջ 84:

Եվ քանի որ, պատանի Մովսեսը 435-437թթ. իր Ներքոդյանում օգտագործել է Ագաթանգեղոսի այնպիսի հատվածներ, որ ունի բառացի նաև Կորյունը Մաշտոցի Վարքում, ապա դա ևս ճիշտորոշ անգամ ապացուցում է, որ Ագաթանգեղոսի և Կորյունի բնագրերում եղած նույնական հատվածների աղբյուրը հենց Ագաթանգեղոսի Պատմության մեր ձեռքը հասած ազգային կանոնական խմբագրությունն է, իսկ բանաքաղը եղել է Կորյունը:

զ) Ներքոդյանում նկարագրելով կույս Հռիփսիմի մեծամարտը հսկայագոր Տրդատ թագավորի հետ արքայի ննջասենյակում, պատանի հեղինակն իր իսկ բանաստեղծական հույզերին և ինքնատիպ պատկերներին միախլուսում է Ագաթանգեղոսի առաջին գրքից քաղած վիպական պատումը (*բանս կարգի առակաց*) Տրդատ հսկայի առասպելական ուժի մասին.

Ագաթ., §123. «Իսկ թագաւորն Տրդատ զամենայն ժամանակս իւրոյ թագաւորութեանն աւերէր քանդէր զերկիրն Պարսից թագաւորութեանն և զաշխարհն Ասորեստանի, աւերէր և հարկանէր ի հարուածս անհնարինս: Վասն այսորիկ պատշաճեցան բանքս այս ի բանս կարգի առակաց, թէ «Իբրև զսէզն Տրդատ, որ սիգալովն աւերեաց զթումբս գետոց, և ցամաքեցոյց իսկ ի սիգալն իւրում զյորձանս ծովուց»: Վասն զի սէզ իսկ էր առ հանդերձս և այլ ուժով պնդութեան, հարստութեամբ, բուռն ոսկերօք և յաղթ մարմնով, քաջ և պատերազմող անհնարին, բարձր և լայն հասակաւ. որ զամենայն ժամանակս կենաց իւրոց պատերազմեալ և առնէր մարտիցն յաղթութիւն: Մեծ անուն պարծանաց քաջութեան անձին ստանայր, և զհոյակապ շքեղութիւն յաղթութեան ընդ ամենայն աշխարհ կացուցանէր. հարկանէր ի հարուածս զթշնամիսն, և խնդրէր զքէնս վրիժուց իւրոց հայրենեացն. առնոյր աւար բազում ի կողմանցն Ասորոց, և թափէր կապուտ սաստիկ անհնարին ի նոցանէն: Արկանէր ի սուր զգօրս Պարսից, և թափէր կողոպուտ անհնարին. լինէր առաջնորդ առն և ձիոյ զօրացն Յունաց, և մատնէր նոցա զբանակս նոցա. հանէր զգօրս Հոնաց սաստիկ յոյժ, և գերէր զկողմանս Պարսից»:

Հմտ. նաև Ագաթ., § 202. «Իսկ թագաւորին թողեալ զիւր ամօքն կորանաց, որ պարտ էր նմա ամաչել, որ այնչափ անուանի եղեալ՝ քաջութեամբ առաւելոյր ի մարտս պատերազմացն. Նա և յՈղիմպիադսն Յունաց հսկայագոր երևեալ, բազում գործս արութեան և անդ ցուցեալ, և ոչ սակաւ մղեալ պատերազմունս յայնկոյս Եփրատ գետոյ ի կոմանս Տաճկաց. ուր և կարեւիւր խոցեալ՝ ելանէր երիվարան ի պատերազմէն. իսկ նորա առեալ զերիվարն, և զասպազէն նորին և զիւր զառնազէնն առեալ կապեալ ի թիկունսն՝ ի վերայ մկանացն ի լիւղ անցանէր ընդ գետն Եփրատ¹. արդ՝ որ այնչափ հզօր զօրաւորն էր և բուռն ոսկերօք՝ յաղջկանէ միոջէ յաղթահարեալ լինէր կամօքն Աստուծոյ»:

1 «Կարեւիւր խոցեալ՝ ելանէր երիվարան...» դրվագը Խորենացին բառացի քաղել է Ագաթանգեղոսից իր Հայոց Պատմության մեջ:

Ներքև, էջ 313. «Մտաներ ի հանդես կոյսն, որ խաչին էր պսակեալ և խաչեալ աշխարհի, առ այն՝ որ խրոխտացեալ թագին զգլուխն ամբառնայր, և որպէս փեսայ յորդորեալ ցնծայր յառազաստի: Հարկանէր կոյսն ի դիմի առ արի սկայն, որ փքացեալ զօրութեամբ զտիեզերս դրդէր, և գռալով խրոխտայր ջնջել զգօրութիւն Մարաց և Պարսից: Ելանէր ծակատ զգաստութեան վառեալ կոյսն առ պազշտեալ վիրագն ահագին, որ ըստ առակաւոր բանին՝ ի սիգալն իւրում աւերէր զթումքս գետոց, և ցամաքեցուցանէր զյորձանս ծովուց: Բռնաւորն պերճացեալ զօրութեամբ հանդիսից, որ ի մարտս Պարսից զփղացն պուրէր զերամակսն, և յըմբշամարտս Յունաց զցլուցն ձեռամբ թափէր զեղջիւրսն, և բռամբ զսկայն հերծուցանէր, ի դիմի հարկանէր կուսին՝ որ զխաչն ունէր ընդ ուսն, և տենչայր ծարափ սիրով խաչակից լինել կուսածին արարչին»:

Պատանի Մովսեսը ոչ միայն բերում է հսկայագոր Տրդատի վերաբերյալ Ագաթանգեղոսի Պատմության մեջ եղած վիպական պատումը, այլև լրացնում է այն բանահյուսության մեջ պահպանված վիպական զրույցի այլ դրվագներով՝ Պարսից փղերի երամակները ցրելու և հունական Օլիմպիական մրցումներում ցուկերի եղջյուրները պոկելու մասին¹:

Է) Ներբողյանում գտնում են նաև ուղղակի վկայություններ քաղված Գրիգոր Լուսավորչի Վարդապետությունից (Ագաթանգեղոսի Պատմության երկրորդ գրքից): Պատանի Խորենացին Հռիփսիմյան կույսերին նմանեցնում է լուսեղեն սպիտակ երամով ձախրող աղավինների հետ, որոնք հիացնում են նույնիսկ երկնային վերին ոգիներին և, ի մեծ ուրախություն բանասեր հետազոտողիս, այս ամբողջ պատկերը պատանի Մովսեսը քաղել է Սուրբ Գրիգորի Վարդապետության 606 – րդ պարբերությունից.

Ագաթ., § 606. «Արդ՝ զարմացեալք հարցանիցեն և զօրք վերինք լուսեղէնք, յորժամ տեսանիցեն զներքնագունդս սրբոց մարմնականաց, զի առ Տէրն ի ներքուստ վերացեալ գայցեն, թէ «Ո՛վ են սոքա իբրև զամպս թռուցեալ և իբրև զաղաւնիս ձագախառն՝ երամովին գան առ իս»: Ապա լուիցեն անդէն յինքնին Տեառնէն պատասխանի, թէ «Սոքա յիս յուսացեալ են. տարայց զնոսա ի լեռն սրբութեան իմոյ, և ուրախ արարից զնոսա ի տաճարի իմում». և ամենեքեան որ տեսանիցեն զնոսա՝ ձանաչիցեն, թէ «Սոքա են զաւակ օրինեալ յԱստուծոյ», և ուրախութեամբ ցնծասցեն ի Տէր: Անդէն ասիցէ Տէրն, թէ «Եղիջիք ինձ ուստերք և դստերք». անդ ապա զուրք խնամոցն յուզիցին արարչական սիրոյն...»:

1 Հետագայում, Հայոց Պատմության մեջ ևս, Խորենացին այդ դրվագներն օգտագործել է ցույց տալու համար Տրդատի քաջագործությունները՝ նախքան թագավորելը (Բ, ՀԹ) և թագավոր եղած ժամանակ (Բ, ՉԲ):

2 «Վարդապետութեան» որոշ ձեռագրեր չունեն «ձագախառն», ինչպես «Ներբողեան» – ում է:

Ներք., էջ 321. «Ուստի հիացեալ զօրք վերինք տեսանելով զհողն կենդանա-
կերպեալ... Չայն արկեալ գոչէին վերինքն առ միմեանս. «Եւ կամ սոքա ո՞վ են,
որ զհետ սորա իբրև զամպս թուցեալ և իբրև զաղաւնիս երամացեալ զան առ
մեզ»: Եւ լսէին ի տեսմէն զի ասէր. «Սոքա յիս յուսացեալ են, և ես տարայց զնո-
սա ի լեառն սրբութեան իմոյ, և ուրախ արարից ի խորան փառաց իմոց»: Կոչէր և
զհարսն. եկեսցես և համզիցես ընդ հովանեաւ թնոց իմոց, քոյր իմ հարսն, զի բո-
լորովին գեղեցիկ ես, և արատ ինչ ոչ գոյ ի քեզ. դիր զիս իբրև զկնիք ի վերայ սրտի
քո, և իբրև զմատանի ի վերայ բազկի քո: Չայնէր և առ օրիորդսն. «Եկայք առ իս,
վաստակեալք և աշխատեալք, կանայք որք դիմեալ գայք ի հանդիսէ, և ես ընկա-
լայց զձեզ. և եղիջիք ինձ դուք յուստերս և ի դատերս, և ես եղէց ձեզ Աստուած»:

ը) Բաց թողնելով շատ զուգահեռ դրվագներ, խոսքս եզրափակում եմ
նրանով, որ Ներբողյանն Ազաթանգեղոսի Պատմության երրորդ գրքի նման
ավարտվում է Աստծո ատելի Դիոկղետիանոսի կործանումով և Աստծուն հու-
սացյալ Կոստանդիանոսի պանծացումով. ընդամենը Ազաթանգեղոսից քաղած
մտքերը պատանի Մովսեսը փոխակերպում է բանաստեղծական քերթվածին
վայել փոխաբերումներով – հեթանոս թագավորների զավակները նույնաց-
վում են օձի ձագերին, իսկ նրանց ջնջող Կոստանդիանոսը ներկայացվում է
իբրև խոյահարող եղջյուր.

Ազաթ., § 868. «զպիղծ և զամօրեն թագաւորսն, զԴիոկղետիանոս և զՄար-
կիանոս և զՄաքսիմիանոս և զԼիկիանոս և զՄաքսենտիոս, և զամենայն զա-
ւակ պղծալից թագաւորացն հեթանոսաց ջնջէր ի միջոյ (Կոստանդիանոս)»:

Ներք., էջ 323. «Աստուծոյ ատելին այն, և ցանկասէրն և գարշելին Դիոկ-
ղետիանոս...ի բաց ջնջեցաւ հանդերձ համախոհ օձին ծննդովք: Ի տանէ նո-
րին սրբոյ կուսին (Հռիփսիմեայ) ծագեաց եղջիր փրկութեան թագաւոր յու-
սացեալ ի տէր՝ սուրբ և յաղթող կայսրն Կոստանդիանոս. և գործակից մերոյ
արքային եղեալ Տրդատայ»: – Հմմտ.Ազաթ., § 877. «Սոյնպէս և (Կոստան-
դիանոս) արքային Տրդատայ, իբրև եղբօր սիրելոյ, սէր ցուցեալ... առաւել
դաշինս կռէր ընդ նմա...»:

Այն, որ Կոստանդիանոս կայսրը կույս Հռիփսիմեի տնից (տոհմից) էր՝ «ի
տանէ սրբոյ կուսին», Ներբողյանի հեղինակը վերցրել է հայերեն Ազաթանգե-
ղոսի Պատմության « 878 – ից՝ Կոստանդիանոսի խոսքից, թե կույս Հռիփսի-
մեին ինքը առաջուց էր ծանաչում, երբ դեռ իրենց աշխարհում էին և զհտեր,
թե ի՞նչ ազնվականներ և «ի մարմնաւոր կողմանէ տոհմակցաց իւրեանց» էին
(Հռիփսիմեն և Գայանեն): Կոստանդիանոսի «հաղթող» մակդիրը պատանի
Մովսեսը փոխառել է Ազաթանգեղոսի Պատմությունից («871, 878) և հետա-
գայում էլ գործածել է իր Հայոց Պատմության մեջ¹:

1 «Յաղթողն Կոստանդիանոս» – տե՛ս Խոր., Բ, 2Է, էջ 236, 2Ը, էջ 237:

V դ. կեսերի մյուս հեղինակների վերաբերյալ վերևում բերված առարկությունները և, հատկապես, պատամի Մովսես Խորենացու Ներքողյանը, որ ներառում է բազում վկայություններ ու դարձվածներ հայերեն Ագաթանգեղոսի Պատմության ամբողջ ծավալով՝ Առաջաբանից մինչև վերջին դրվագները, վերջնապես խորտակում են XIX դարից ի վեր մինչև օրս իշխող այն տեսակետը, թե Գրիգոր Լուսավորիչը նրանց երկերում չի հիշատակվում լոկ այն պատճառով, որ Ագաթանգեղոսի Պատմությունը գրվել է նրանցից ավելի ուշ և, իբրև առաջին անգամ, Ագաթանգեղոսի Պատմության մեջ է ստեղծվել Գրիգոր Լուսավորչի կերպարը: Իրականում, բոլոր հեղինակներն էլ քաջ ծանոթ են Գրիգոր Լուսավորչի անվանը և գործունեությանը: Սակայն, մի բան է անունն իմանալը, մի այլ բան՝ տվյալ շրջանում Լուսավորչի անունն ու գործը Մատյաններում հիշատակելն ու պանծացնելը: Այդ խորհրդավոր լռությունը ես բացատրում եմ բոլորովին այլ դավանաբանական հիմունքով, որ անվանում են «խորհրդապաշտական արգելք»:¹

Այսպիսով, գալիս ենք այն հետևության, որ մեր ձեռքը հասած Ագաթանգեղոսի Պատմությունը գրվել է Սահակ Պարթևի ձեռքով 410-ական թվերին և հանդիսանում է հայ ինքնուրույն պատմագրության երախայրիքը: Դա հենց այն խմբագրությունն է, որ, ինչպես նշվեց, Ն.Մառը և Ն.Աղոնցը անվանում են Հայ եկեղեցու ազգային կանոնական խմբագրություն: Եվ դրա շնորհիվ էլ այդ քննադիրը մինչև մեր օրերն է հասել գրեթե անփոփոխ: Հենց այդ խմբագրությունից էլ օգտվել է Կորյունը 440 թ., որը եկեղեցական ժողովից հատուկ հանձնարարություն է ունեցել շարադրել Մաշտոցի Վարքը բացառապես Ագաթանգեղոսի Պատմությունից և Վարդապետությունից քաղած պարբերություններով՝ երկու նպատակով:

ա) Հայոց ազգի երկրորդ լուսավորչին սրբացնելու համար նրա Վարքը ստեղծել միայն առաջին լուսավորչին մեծարող բառաբանով:

բ) Քանի որ 440 թ. Ս. Գրիգորի պաշտամունքի հետ անհայտ ժամանակով արգելված էր նրան փառաբանող Ագաթանգեղոսի Պատմությունը, ապա եկեղեցական տեղապահ Հովսեփ երեցն իր համախոհներով որոշեցին այդ կեղյա՝ Մաշտոցի Վարքի միջոցով, Մեծ Հայքի դպրոցների սաների մեջ համատարած վառ պահել Ագաթանգեղոսի Պատմության քննադրի մի զգալի մասը ամբողջական պարբերություններով, մինչև այն ժամանակները, երբ վերստին վերականգնվի Ագաթանգեղոսի Պատմությունը:

1 Տես այս մասին մանրամասն իմ «Սուրբ Սահակի տեսիլքը և Գրիգոր Լուսավորչի նշխարաց գյուղը» ուսումնասիրությունը («Քրիստոնյա Հայաստան», Էջմիածին, 2012, մայիսի Բ և հունիսի Ա համարներում):